

Համաձայնեցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Վ. Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ
Գ. Խաչատրյան

12 հունվար 2012 թ. N 1

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ N 1

ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ԳՈՎԱԶԴԻՄԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԽԱՂԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ (ԳՐԱԶՆԵՐԻ) ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում դրամական (փողային) շահումները կարող են գովազդվել և տրվել միայն ՀՀ դրամով: Օրենքի իմաստով «Հայաստանի Հանրապետության տարածք» հասկացությունը համապատասխանում է «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքով տրված հասկացությանը (այդ մասին պարզաբանվել է ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 11.10.2005թ. «Հայաստանի Հանրապետությունում արժույթային արժեքներով գործարքների իրականացման վերաբերյալ» N 3 պաշտոնական պարզաբանմամբ /2-րդ կետ/):

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն ՀՀ տարածքում ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման, աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների վճարումների, գույքի գնահատման և աշխատանքների կատարման, գույքի օգտագործման դրամական (փողային) գնանշումներն իրականացվում են ՀՀ դրամով (բացառությամբ՝ Օրենքով նախատեսված դեպքերի): ՀՀ տարածքում ռեզիդենտների միջև ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման, գույքի օգտագործման դիմաց փողային վճարումները, ներառյալ՝ ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսավճարները և իրավունքի կամ արտոնության իրականացման կամ տրամադրման դիմաց տրվող հատուցումները, ապահովագրավճարներն ու ապահովագրական հատուցումները, ընդունվում են և իրականացվում են ՀՀ դրամով (բացառությամբ՝ Օրենքով նախատեսված դեպքերի): Ըստ էության, խաղաղությունների (գրագների) իրականացումը չի ներառվում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով թվարկված գործարքների մեջ:

Նշված դրույթների կիրառման հետ կապված հարցերի ճշտման նպատակով՝ դեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, *պաշտոնապես պարզաբանում եմ.*

1. Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառման համար կարևոր է, որ դրամական (փողային) շահումները գովազդվեն կամ տրամադրվեն ՀՀ տարածքում: Այս տեսանկյունից ինտերնետային կայքերում (ինտերնետ միջավայրում) փողային շահումների արտարժույթով գովազդելը չի դիտվում որպես Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում, եթե գովազդի մեջ միաժամանակ նշվում է դրամային համարժեքը:

2. Եթե ՀՀ տարածքում չգտնվող հաշվից դրամական (փողային) շահումները փոխանցվում են ՀՀ տարածքում չգտնվող համակարգերի միջոցով, ապա այդ ընթացակարգերով վճարումները չեն համարվում ՀՀ տարածքում կատարված:

3. Խաղաղությունների (գրագների) արտարժույթով իրականացման դեպքում չեն կիրառվում Օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներով նախատեսված սահմանափակումները:

4. Սույն պաշտոնական պարզաբանումը վերաբերում է ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ինտերնետ տոտալիզատորների կազմակերպիչների կողմից խաղաղությունների (գրազանների) և դրամական (փողային) շահումների իրականացմանը, ինչպես նաև ինտերնետային կայքերում (ինտերնետ միջավայրում) նրանց կողմից կազմակերպվող ինտերնետ տոտալիզատորներին վերաբերող փողային շահումները գովազդելուն: